ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԵՏԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 660-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ
Կարգավիճակ	Գործում է (20.10.2026-մինչ օրս)
Սկզբնաղբյուր	Հրապարակվել է միասնական կայքում
Ընդունող մարմին	ՀՀ փոխվարչապետ
Ընդունման ամսաթիվ	19.10.2026
Ստորագրող մարմին	ՀՀ փոխվարչապետ
Ստորագրման ամսաթիվ	19.10.2026
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	20.10.2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 660-Ա

ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԵՏԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝

1. Բարեգործական որակել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3,827,657,455 դրամ ընդհանուր արժողությամբ «Գետային էկոհամակարգերի և անտառների վերականգնում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ **Տ. Խաչատրյան**

Երևան

19.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 660-Ա որոշման

«ԳԵՏԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Էկոհամակարգերի լայնածավալ վերականգնում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Արարատի մարզերում՝ թիրախավորելով Եղեգիս գետի էկոհամակարգերը, վերականգնելով վնասված անտառային և գետային էկոհամակարգերը Արարատի և Վայոց ձորի հրաբխային լանդշաֆտներում, կենսաբազմազանության էկոլոգիական միջանցքները: Վտանգված տեսակների պոպուլյացիաների, Եղեգիս գետի բնական հիդրոլոգիական ռեժիմի ամրապնդում, ընդլայնելով Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի տարածքը, ամրապնդելով տեղական

		համայնքների կայուն զարգացման կարողությունները և ձևավորելով ֆինանսական կայուն մեխանիզմ Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի պահպանման և կառավարման համար։
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից։
3.	Բարեգործը	1) Քեմբրիջի համալսարան (Միացյալ Թագավորություն, Թրամփինգթոն փողոց, Քեմբրիջ) - 2,472,468,000 դրամ 2) Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի Գերմանիայի մասնաճյուղ (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Ամ Օբերշլոս 299448 Կրանիչֆելդ) - 1,355,189,455 դրամ
4.	Ծրագիրը կատարողը	Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ (քաղաք Երևան, Խանջյան 47/1, բնակարան 14, ՀՎՀՀ՝ 02565835)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Արարատի մարզեր, բնագավառը՝ բնապահպանություն
6.	Ծրագրի բյուջեն	3,827,657,455 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Արարատի մարզերի համայնքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ը
		1) անտառ-մարգագետնային արահետների և բնական էկոլոգիայի վերականգնում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 400,110,392 դրամի չափով. 2) Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի ընդլայնում 17,500 հեկտարով և կենսաբազմազանության արդյունավետ պահպանության իրականացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 1,270,048,573 դրամի չափով. 3) բնական հիդրոլոգիական ռեժիմների ամրապնդում և գետափնյա բուսածածկի վերականգնում թիրախային գետային հատվածներում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2032 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 177,190,351 դրամի չափով. 4) կենսաբազմազանության պահպանության հետ կապակցված համայնքների դերակատարության և ներգրավվածության

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ուժեղացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 150,609,545 դրամի չափով. 5) հինգ անտառակայանի շինարարություն և կահավորում, ինչպես նաև անտառական տանող ճանապարհների շինարարություն, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 598,675,401 դրամի չափով. 6) Արարատի մարզում կենդանիների փրկարար կենտրոնի ընդլայնում և հագեցվածության ապահովում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 781,306,372 դրամի չափով. 7) գետափնյա հատվածների գետի հոսքի հունի կարգավորման (ջրի կորստի կանխարգելման նպատակով) իրականացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 431,021,567 դրամի չափով. 8) բնապահպանական հետազոտական և ուսումնասիրման աշխա- տանքների և փորձարար միջամտությունների իրականացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2036 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,695,254 դրամի չափով:
		1) անտառ-մարգագետնային արահետների և էկոլոգիական վերականգնման աշխատանքներ. ա) GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ) վերլուծության, դեգրադացված տարածքների քարտեզագրման և դեմարկացիայի ծառայության ձեռքբերում՝ 2,625,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, բ) անտառային և գետային համակարգերի վերականգնման աշխատանքների ծառայությունների ձեռքբերում (բնական աջակցվող վերականգնում) 6,000 հեկտար տարածքի վրա՝ 28,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, գ) բնիկ տեսակների անտառապատման աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում (պարագաների, սերմերի և քիմիկատների ձեռքբերում կամ ներմուծում) 300 հեկտար տարածքի վրա՝ 140,875,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, դ) արածեցման կառավարման պլանի մշակման և անտառկառավարման ուսուցումների ծառայությունների ձեռքբերում՝ 19,312,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ե) երիտասարդ անտառների վերականգնման և պահպանման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում կամ ներմուծում և

		տեղադրում՝ 1,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, զ) խողովակաշարերի հողային թեքությունների կառուցման աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում, և այդ նպատակով ինժեներական խորհրդատվության ծառայության ձեռքբերում՝ 7,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, է) էլեկտրական հովիվների, ցուցատախտակների, պարիսպների ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 95,032,889 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ը) 1 հատ սառնարանային բուսանյութեր և տնկիներ փոխադրող մեքենայի ձեռքբերում կամ ներմուծում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, թ) 2 հատ բեռնափոխադրման դրոնի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժ) 3 հատ գյուղատնտեսական դրոնի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 9,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի ընդլայնում 17,500 հեկտարով և կենսաբազմազանության արդյունավետ պահպանության աշխատանքներ. ա) կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի 17,500 հեկտար ընդլայնման, քարտեզագրման, հողերի գործարքների նոտարական և հողերի գնահատման ծառայությունների ձեռքբերում՝ 24,625,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, բ) արևային ֆոտովոլտային կայանների շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման ծառայության ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, գ) գործուղումների համար անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերում՝ 12,875,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, դ) անտառապահների վերապատրաստման և ՍՄԱՐԹ ուսուցման ծառայությունների ձեռքբերում, և այդ նպատակով պարագաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 21,062,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ե) կենսաբազմազանության մոնիթորինգի սարքավորումների ներմուծում, ձեռքբերում և տեղադրում ու դրա կանոնավոր հետազոտությունների ծառայության ձեռքբերում՝ 85,312,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, զ) հայկական մուֆլոնի վերաբնակեցման իրագործելիության ուսումնասիրության ծառայության ձեռքբերում՝ 62,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, է) հիմնական կենսաբազմազանության տարածք շրջանակային վերլուծության և Թռչունների բնադրման տարածք

		վերագնահատման ծառայությունների ձեռքբերում՝ 18,082,125 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ը) 4 հատ 2026 թ. Toyota Land Cruiser Pick up 79DC մեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 80,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, թ) 4 հատ 2023 թ. Toyota Land Cruiser Prado150 ավտոմեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 64,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժ) 1 հատ Toyota մակնիշի շտապօգնության մեքենայի (կենդանիների համար) ներմուծում կամ ձեռքբերում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժա) 4 հատ Toyota Hilux Double Cabin (պիկապ) ավտոմեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 64,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժբ) 1 հատ Toyota Land Cruiser 300 ավտոմեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 28,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժգ) 1 հատ Toyota BZ4X լրիվ էլեկտրական ավտոմեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժդ) 1 հատ Toyota Land Cruiser Hardtop 78 ավտոմեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժե) 2 հատ Toyota Land Cruiser Hardtop 76 ավտոմեքենայի ներմուծում կամ ձեռքբերում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժզ) 6 հատ մարմնի վրա ամրացվող GPS համակարգ ունեցող տեսախցիկի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 2,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժէ) 10 հատ լուսանկարչական/վիդեո տեսախցիկի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 2,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժը) 50 հատ թակարդ-տեսախցիկի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 12,187,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժթ) 1 հատ լազերային հեռաչափման համակարգի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 6,187,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ի) 5 հատ բնապահպանական մոնիթորինգի դրոնի ձեռքբերում կամ ներմուծում՝ 12,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իա) 15 հատ բարձր լուծաչափի ջերմային տեսախցիկի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

		իբ) 5 հատ նոթբուքի ձեռքբերում կամ ներմուծում՝ 1,968,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իգ) 1 հատ տպիչ սարքի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 562,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իդ) սերվերի և էլեկտրական անխափան սնուցման համակարգի ձեռքբերում և տեղադրում՝ 3,487,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իե) սերվերի անվտանգության համակարգի ձեռքբերում և տեղադրում՝ 806,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իզ) 10 հատ մեծ դաշտային վրանի ձեռքբերում կամ ներմուծում՝ 17,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իէ) 4 հատ շարժական վագոն-տնակի ձեռքբերում, ներմուծում կամ կառուցման աշխատանքների իրականացում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իը) արևային ֆոտովոլտային կայանների ձեռքբերում կամ ներմուծում, մոնտաժման և տեղադրման աշխատանքների ծառայությունների ձեռքբերում՝ 385,151,271 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իթ) խոշորածավալ ինվերտոր-մարտկոցային համակարգի ձեռքբերում կամ ներմուծում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, լ) Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի նշանների և տեղեկատվական վահանակների տեղադրման համար նյութերի, տպագրանյութերի, այլ պարագաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 6,750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, լա) այլ սարքավորումների, տեխնիկայի և պարագաների ձեռքբերում՝ 4,312,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 3) բնական հիդրոլոգիական ռեժիմների ամրապնդման և գետափնյա բուսածածկի վերականգնման աշխատանքներ. ա) հիդրոլոգիական մոնիթորինգի կայանների ապրանքների ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 12,562,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, բ) գետափնյա միջանցքների վերականգման աշխատանքների իրականացման ապրանքների ձեռքբերում կամ ներմուծում և անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում կամ ներմուծում՝ 78,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, գ) հիդրոլոգիական տվյալների հավաքագրման, ուսումնասիրման և վերլուծության ծառայության ձեռքբերում՝ 3,750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, դ) փոքր հիդրոէլեկտրակայաններում ավտոմատացված ջրային հոսքի մոնիթորինգի և խորհրդատվության ծառայության ձեռքբերում՝ 9,000,000 դրամի չափով, առանց
	Ձեռք բերվող (ներմուծվող)	

10.	ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ավելացված արժեքի հարկի, ե) ձկնանցումների բարելավման, գնահատման, նախագծման և կառուցման աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 10,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, զ) 4 հատ հիդրոլոգիական մոնիթորինգի կայանի ձեռքբերում կամ ներմուծում՝ 13,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, է) 1 հատ փոքր հիդրոէլեկտրակայանների ջրառի ավտոմատ մոնիթորինգի կայանի (պիլոտային) ձեռքբերում կամ ներմուծում՝ 11,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ը) փոքր հիդրոէլեկտրակայանների ջրի վերահսկման լրացուցիչ սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում՝ 11,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 4) բնության պահպանության հետ կապակցված համայնքների դերակատարության և ներգրավվածության ուժեղացման աշխատանքներ. ա) կենսապահովման 4 հիմնական ոլորտներում (կայուն արածեցում, բնության ուղեկցորդություն, կայուն հյուրընկալության (Կանաչ բանալի էկոհավաստագիր), Վայրի բույսերի կայուն հավաքի ստանդարտ հավաքի, գինեգործության վերապատրաստումների և մասնագիտացված ծառայությունների ձեռքբերում՝ 44,306,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, բ) բիզնեսային խորհրդատվության և բիզնես-պլանների մշակման մասնագիտական ծառայության ձեռքբերում՝ 5,625,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, գ) գինեգործների շուկայի վերլուծության և շուկայական պատրաստվածության մասնագիտական ծառայության ձեռքբերում՝ 9,562,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, դ) հաղորդակցության արտադրանքի, սոցիալ-տնտեսական գնահատման ծառայության ձեռքբերում՝ 16,350,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ե) պարիսպների կառուցման նյութերի և աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 34,127,195 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, զ) 10 հատ էլեկտրական հեծանիվի ձեռքբերում՝ 3,750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, է) 10 հատ ոչ էլեկտրական հեծանիվի ձեռքբերում՝ 2,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ը) հեռադիտակների և թռչնադիտման հեռադիտակի ձեռքբերում կամ ներմուծում և տեղադրում՝ 6,187,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) հինգ անտառակայանի շինարարության և կահավորման, ինչպես նաև անտառակայան տանող ճանապարհների շինարարական աշխատանքներ.

ա) անտառակայանների և դրանց տանող ճանապարհների շինարարական աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 250,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

բ) շինարարական նյութերի և ապրանքների ձեռքբերում կամ ներմուծում, և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 253,639,455 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) կենդանիների փրկարար կենտրոնի ընդլայնման և հագեցվածության ապահովման աշխատանքներ.

ա) կենտրոնի շինարարության անհրաժեշտ ապրանքների, նյութերի ձեռքբերում և ներմուծում, աշխատանքների իրականացման և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 397,278,910 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

բ) կենտրոնի հագեցվածության ապահովման նպատակով կենցաղային պարագաների, տեխնիկայի և դեղորայքի ձեռքբերում կամ ներմուծում՝ 260,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) գետափնյա հատվածների գետի հոսքի հունի կարգավորման աշխատանքներ.

ա) գետափնյա հատվածներում շինարարական աշխատանքների իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 100,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

բ) գետափնյա հատվածներում շինարարական աշխատանքների համար շինանյութի ձեռքբերում կամ ներմուծում, և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 262,599,610 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) բնապահպանական հետազոտական և ուսումնասիրման և փորձարար միջամտությունների աշխատանքներ.

ա) ծրագրի մոնիթորինգի և գնահատման մոդելավորման ծառայության ձեռքբերում՝ 4,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

բ) միանգամյա ծրագրային գործողությունների և փորձարարական ծառայությունների ձեռքբերում՝ 11,602,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) ծրագրի կազմակերպչական և գործառնական ծառայություններ.

ա) խելացի (SMART) համակարգով պարեկության կազմակերպման ուսուցման ծառայության ձեռքբերում՝ 375,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

		բ) գրասենյակային պարագաների, գրասենյակային տեխնիկայի, բանկային և կապի ծառայությունների ձեռքբերում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, գ) շահառուների ներգրավման և ներկայացուցչական հանդիպումների կազմակերպման ծառայության ձեռքբերում՝ 5,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, դ) գրասենյակների և պահեստային տարածքների վարձակալության ձեռքբերում՝ 135,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ե) ծրագրում աշխատող անձնակազմի հավաքագրման ծառայության ձեռքբերում՝ 680,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. զ) հոգեբանական աջակցության ծառայության ձեռքբերում՝ 1,020,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, է) ֆինանսական հաշվապահական կառավարման ծառայության և հաշվապահական հաշվառման ծրագրերի ձեռքբերում՝ 35,611,416 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ը) անկախ աուդիտորական ծառայության ձեռքբերում՝ 14,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, թ) ծրագրի համակարգման, վերլուծությունների կատարման և ընդհանուր խորհրդատվական ծառայության ձեռքբերում՝ 10,750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժ) ծրագրի փակման/բացման միջոցառումների և հյուրասիրությունների կազմակերպման ծառայության ձեռքբերում՝ 30,638,334 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժա) սուրճի, թեյի և հյուրասիրության սարքերի վարձակալության ծառայության ձեռքբերում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժբ) հյուրանոցային սրահների վարձակալության ծառայության ձեռքբերում՝ 74,375,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժգ) հյուրանոցային սենյակների վարձակալության ծառայության ձեռքբերում՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժդ) ինտերնետային և բջջային կապի ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժե) էլեկտրաէներգիայի ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժզ) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժէ) գազամատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց

		ավելացված արժեքի հարկի, ժը) կայքէջի մշակման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ժթ) հեղուկ գազի ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, ի) բենզինի ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իա) դիզելային վառելիքի ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իբ) օդանավակայաններում մատուցվող ծառայությունների, ինչպես նաև փոստային, առաքման և սուրհանդակային ծառայությունների ձեռքբերում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իգ) դիզայներական և տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իդ) ավտոմեքենաների սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայությունների ձեռքբերում՝ 9,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, իե) աղբահանության և պահակային, մաքրման ծառայությունների ձեռքբերում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) էլեկտրաէներգիայի ծախսեր՝ 25,000,000 դրամի չափով. 2) ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր՝ 25,000,000 դրամի չափով. 3) գազամատակարարման ծախսեր՝ 25,000,000 դրամի չափով. 4) ինտերնետային և բջջային կապի ծախսեր՝ 25,000,000 դրամի չափով. 5) անկախ աուդիտորական ծառայություններ՝ 14,500,000 դրամի չափով. 6) ֆինանսական հաշվապահական կառավարման ծառայություն և հաշվապահական հաշվառման ծրագրեր՝ 35,611,416 դրամի չափով. 7) ծրագրի փակման/բացման միջոցառումների և հյուրասիրու- թյունների կազմակերպման ծախսեր՝ 30,638,334 դրամի չափով:
	Համագործակցությունը պետական կառավարման,	1) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն, նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներ և կից գործող կազմակերպություններ. 2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներ. 3) Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ.

12.	տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	4) Արարատի մարզպետի աշխատակազմ. 5) «Հիդրոէկոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն. 6) Եղեգիսի համայնքապետարան. 7) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարության Միասնական սոցիալական ծառայության համապա- տասխան տարածքային կենտրոններ. 8) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրու- թյունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ ներքին վերահսկողությունն իրականացվելու է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) հոգաբարձուների խորհրդի կողմից, ծրագրի արդյունքների վերաբերյալ կանոնավոր հաշվետվությունները կներկայացվեն բարեգործներին, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ **Տ. Խաչատրյան**

19.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան